«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողի մեջ արժեհամակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝Հ. լեզու և գրականություն

Կատարող՝ Սողոմոնյան Փայլանուշ

Մարզ՝ Արագածոտնի մարզ

Ուսումնական հաստատություն՝ Ալագյազի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

1. Սովորողի արժեքային համակարգի դրսևորումները 4

2. Թումանյանական ստեղծագործությունների ազդեցությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում 9

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Անհատի գիտակցության մեջ արժեքների սերմանումն ու ձևավորումը իրականացվում է բացառապես դաստիարակության գործընթացում: Այսպես. բարոյական դաստիարակությունը ձևավորում է միջանձնային հարաբերությունները կարգավորող նորմեր, հույզեր ու համոզմունքներ, գեղագիտականը՝ աշխարհի և գեղեցիկի ընկալման, իսկ հոգևոր դարտիարակությունը, ըստ Ի. Պ. Պոդլասիու, «դաստիարակության բաղադրիչ է, որն ուղղված է մարդու մեջ անանց արժեքների ձևավորմանը»[1]: Արժեքներն ու նորմերը սովորողի կառուցվածքային միավորներն են, որոնք թույլ են տալիս հետևել և վերլուծել մարդու գործունեության բոլոր ձևերը, բացատրել նրա ներքին հոգեբանական դրդապատճառների փոփոխությունը: Դրանք կազմում են միասնական կարգավորող համակարգ, որը կարգավորում է մարդկանց և սոցիալական խմբերի վարքագիծը հասարակության մեջ: Արժեքը նորմատիվային համակարգ է, որը գործունեության ձևի ընտրության ուղեցույց է, այն ստուգում և ընտրում է իդեալները, սահմանում նպատակները, ապահովում նպատակներին հասնելու միջոցները: Արժեքներն ու նորմերը մասն են կազմում ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գիտակցության և մշակույթի:

Արժեքներ են նաև այն գաղափարները, իդեալներն ու նպատակները, որոնց ձգտում է մարդը և ժողովուրդը: Գիտնականների կողմից արժեքները դասակարգվել են որպես՝ 1) ճանաչողական, 2) սոցիալական 3) քաղաքական, 4) կրոնական, 5) գեղագիտական և 6) տնտեսական[2]:

Թեմայի արդիականությունը կայանում է սովորողի արժեքների բացահայտման և դրսևորումների տարատեսակ դիրքորոշումների հետ:

Թեմայի նպատակը կայանում է արժեքային համակարգի, ինչպես նաև դրա վերաբերյալ տեսությունների լուսաբանման մեջ: Թեմայի նպատակից ելնելով, առաջ են քաշվել այնպիսի խնդիրների լուծումներ, ինչպիսիք են օրինակ սովորողի արժեքային համակարգի ճիշտ ձևավորման ու դրա վրա ազդելու միջոցների ներկայացումը ու բացահայտումը:

[1] Подласый И.П., Педагогика начальной школы, Владос, 2008, էջ 107

[2] Թորգոմյան Լ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Ուս. ձեռն., Եր., 2011թ, էջ 6

1. Սովորողի արժեքային համակարգի դրսևորումները

Արժեքը տվյալ անհատի կամ հանրույթի համար կենսականորեն առավել նշանակալի երևույթն է՝ նյութական կամ հոգևոր այս կամ այն բարիքը: «Ազատություն», «փող», «ընտանիք», «տոկունություն», «արդարություն», «կրթություն», «փառք», «իշխանություն», «հեղինակություն», «սեր», «առողջություն», «ուժ», «բարեպաշտություն», «ընկերություն», «իմաստություն», «երջանկություն» և այլն՝ արժեքներ են, որոնք բավարարում են անհատի (հանրույթի) կենսական պահանջմունքները, իմաստավորում կյանքը, ուղղորդող դեր են խաղում նրա կենսագործունեության մեջ[3]:

Ոչ թե այդ առարկաները, երևույթները, հատկությունները ինքնին արժեքի կարգավիճակ ունեն, այլ տվյալ սուբյեկտի ներքնածին հատկությունները, առկա մշակութային պայմաններն են դրանց հաղորդում արժեք լինելու կարողություն:

Սովորողի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, քանի որ բոլոր արժեքները փոխկապված են և գոյացնում են սովորողի ներաշխարհի ամբողջությունը: Խմբի, խավի, կազմակերպության, ազգի արժեքները նույնպես համակարգային հատկանիշ ունեն, որովհետև դրանք նույնպես փոխպայմանավորված են և ամբողջացնում են տվյալ հանրույթի հոգևոր կերպարը: Առավել հասուն մտածելակերպով սովորողը ունի արժեքների իր համակարգը (թեպետ, հնարավոր է, նա երբևէ խորհրդածած չլինի դրա շրջանում), որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում: Սոցիոլոգիական հարցումները, թեստերը, ինքնագնահատականի զանազան միջոցները պարզաբանում են այդ արժեքները, իսկ ավելի ստույգ դրանց մասին շրջապատի մարդիկ դատում են ըստ սովորողի իրական արարքների:

Ազգի արժեքների համակարգը հիրավի բախտորոշ նշանակություն ունի: Հակիրճ՝ դա ազգի պատմական երկարատև զարգացման վկայությունն է, ներկա կեցության հիմքը, բնականոն գործառության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգահատուկ արժեքներն արձանագրվում են ազգի ինքնագիտակցության տարբեր ձևերի մեջ՝ արվեստի, բարոյականության, փիլիսոփայության, կրոնական պատկերացումների, բանահյուսության[4]:

---

[3] Асмолов А.Г. Психология личности М.: Изд.-во МГУ, 1990.с.-41.

[4] Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., էջ 84:

Արժանապատվությունը սեփական սովորողի արժեքի գիտակցումն է: Դա սովորողի ինքնագնահատականն է, իր վաստակի, դիրքի, արարքների, իրավունքների գնահատականը: Ունենալ արժանապատվության զգացում՝ նշանակում է ունենալ սեփական «ես»-ի արժանիքի զգացում, ինքն իրեն համարել որոշակի պատվի, հարգանքի, հեղինակության արժանի: Ազգային արժանապատվությունը, բնականաբար, սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը իր հանդեպ սովորողի հարգանքն է, ապա արդարամտությունը հարգանքն է ուրիշների հանդեպ, նրանց արժեքի գիտակցումը, այլոց գնահատումը: Լինել արդարամիտ՝ ամենից առաջ նշանակում է լինել արժանահատույց՝ ամեն մեկին ըստ արժանվույն հատուցելու ունակ:

Իսկապես արդարամիտ կարող է լինել միայն արժանապատվություն ունեցողը: Իր ազգակցին, առհասարակ ուրիշին արդարացի գնահատելու ընդունակությունը հետադարձ ազդեցություն է գործում ինքն իրեն գնահատելու վրա՝ մարդուն օգնում ճիշտ, սթափ, հավասարակշիռ գնահատել թե՛ իրեն, թե՛ այլոց[5]: Այն, թե ո՛ւմ և ինչի՛ համար ենք համարում արժանապատիվ, բնութագրում է ոչ միայն ուրիշներին, այլ հենց ինքներս մեզ: Արդարամտությունը, այսպիսով, հակադարձվող բնութագրում է, այսինքն՝ ոչ միայն արտահայտում է մեր սեփական ինքնագնահատականը, այլև անդրադառնում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ սովորողի (հանրույթի) վերաբերմունքն է: Սա բացառիկ կարևորության բնութագիր է՝ թե՛ սովորողի , թե՛ ազգի, թե՛ ամբողջ քաղաքակրթության առումով: Աշխատասիրությունը կայուն, բարգավաճ, զարգացող սուբյեկտի հատկությունն է, առաջընթացի գլխավոր նախադրյալը:

Առանձնացված արժեք-արժանիքները անկապտելի են: Դրանց ներքին միասնությունը և փոխպայմանավորվածությունը կարող ենք անվանել «Երեք Ա-ի օրենք»: Սրա էությունն ավելի լավ հասկանալու համար դիտարկենք օրենքի խախտումները:

Միայն սովորողի արժանապատվությունը՝ առանց արդարամտության և աշխատասիրության, կարող է հանգեցնել անհատապաշտական ինքնահավանության, գոռոզության, նարգիզականության: Արդարամտությունից ու աշխատասիրությունից զուրկ

[5] Васильюк Ф. Е. Психология переживания. Изд. –во Моск. Ун-та, 1984,с. – 95.

սովորողը ունի բարձր, գերբարձր ինքնագնահատական, որն այդպիսին է, քանի որ նա, նախ, ունակ չէ արդար գնահատելու մյուսներին[6]: Բացի այդ՝ ինքնագնահատականը աղճատված է, քանի որ շրջանցում է մարդու անհատական ինքնահաստատման ու հանրային պիտանիության հիմնական ասպարեզը՝ աշխատանքը: Իսկ ազգային արժեքների համակարգի առումով դա անցանկալի է, քանի որ երբ ազգի հավաքականության մեջ մեծ է այսպիսի անհատների տեսակարար կշիռը, ապա սաստկանում են ազգային սնապարծության դրսևորումները:

Արժեքներն ու նորմերը սովորողի կառուցվածքային միավորներն են, որոնք թույլ են տալիս հետևել և վերլուծել մարդու գործունեության բոլոր ձևերը, բացատրել նրա ներքին հոգեբանական դրդապատճառների փոփոխությունը: Դրանք կազմում են միասնական կարգավորող համակարգ, որը կարգավորում է մարդկանց և սոցիալական խմբերի վարքագիծը հասարակության մեջ: Արժեքը նորմատիվային համակարգ է, որը գործունեության ձևի ընտրության ուղեցույց է, այն ստուգում և ընտրում է իդեալները, սահմանում նպատակները, ապահովում նպատակներին հասնելու միջոցները: Արժեքներն ու նորմերը մասն են կազմում ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գիտակցության և մշակույթի[7]:

Արժեքներ են նաև այն գաղափարները, իդեալներն ու նպատակները, որոնց ձգտում է մարդը և ժողովուրդը: Առանձնացվում են.

- ունիվերսալ կամ համամարդկային արժեքներ՝ սեր, հեղինակություն, հարգանք, ապահովություն, գիտելիքներ, արժույթ, իրեր, ազգություն, ազատություն, առողջության,
- ներխմբային արժեքներ՝ քաղաքական, կրոնական,
- անհատական արժեքներ՝ անձնային:

Գիտնականների կողմից արժեքները դասակարգվել են որպես՝ 1) ճանաչողական, 2) սոցիալական 3) քաղաքական, 4) կրոնական, 5) գեղագիտական և 6) տնտեսական[8]:

այսօր կրոնական դաստիարակության մեջ «իրեն զգացնել է տալիս գիտական լուրջ հիմնավորումից զուրկ ինքնագործունեությունը, տնավարությունը: Բնականաբար տասնամյակներ շարունակ, թե՛ մարդկանց հոգիներում, թե՛ մանկավարժագիտական գրականության մեջ կրոնաբարոյական արժեքները չեն իմաստավորվել, չեն դարձել

[6] Վալերի Միրզոյան, «Հայ Արիներ» Թիվ 18, 2003թ., էջ 24:
[7] Карпушина В., В. Капцов, Структура личностных ценностей, статья, 14.15.2009:
[8] Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., էջ 35-39:

ուսումնասիրության առարկա, արժեքներ, որոնց դաստիարակչական հնարավորությունները դժվար չէ գերագնահատել:

Կրոնի դաստիարակչական առաքելության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն սովորողի ներաշխարհի վրա ներգործելու մի ամբողջ համակարգ է՝ սոցիալ_պատմական և էթնոհոգեբանական արմատներով:

Հիմնվելով կրոնի և հավատի վերաբերյալ շատ հոգեբանների կատարած հետազոտությունների վրա՝ գտնում ենք, որ երեխաներին անհրաժեշտ է փոքր տարիքից զինել հոգևոր արժեքային գիտակցությամբ, օգնել դրանց ավելի խորը վերլուծությանը և անձնական փորձով համոզմունքների ձևավորմանը: Այս մոտեցումը ավելի մեծ տարիքում կարող է նպաստել կրոնական գիտակցության արժեքային կողմնորոշմանը: Այն հետագա կյանքի ընթացքում հնարավորություն կտա անձնավորությանը ճիշտ վերլուծություններ կատարելու հավատքի վերաբերող խնդիրներում: Այս հարցում մանկավարժին անկասկած կարող է օգտակար լինել կրոնական հոգեբանության իմացությունը:

Ցանկացած հոգեկան երևույթ իրենից ներկայացնում է իմացական, զգայական և կամային պրոցեսների ամբողջություն: Այդ թվում նաև հավատքի հոգեկան երևույթը: Հոգեբանության խնդիրը մարդու գործունեության պարզաբանումն է, նրա հոգևոր կյանքի սաղմնավորման, կազմակերպման և հետագա զարգացման ընթացքում: Հոգեբանները գտնում են, որ մարդու հարմարվելը արտաքին միջավայրին սկզբում կատարվում է մեխանիկական բնույթի գործողությունների միջոցով, որոնք հետզհետե դառնում են ավելի գիտկցված և նպատակաուղղված: Կատարվում է գործողությունների ինտերիորացում (ներհայեցողություն)՝ այսինքն դրանք վեր են ածվում մտավոր օպերացիաների՝ կատարվելիք գործողությունների մտավոր քննարկումների և ստուգումների պրոցեսում, որը հնարավոր է դարձնում նպատակաուղղված, իմաստավորված գործունեության ծավալումը : Այս ժամանակ է, որ արտահայտվում են կրոնական գիտակցության սաղմերը: Հաճախ գիտակցությունը նույնացվում է զգայության, մտապատկերների և մտածողության հետ, որն արտահայտվում է կրոնական պատկերացումների միջոցով, այս դեպքում, հոգեկանը դիտվում է, որպես օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ պատկեր[9]: Ռ. Բերխոուն հայտարարում է, որ ,կրոնական խորհրդանշանները ունեն յուրահատուկ գենետիկական ձև, այսինքն բիոքիմիական հիմք, որը ներդրված է գլխուղեղի բարդ

[9] Օլշաննիկովա. Ա. Ե., Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., էջ 46:

կառուցվածքում և արտահայտվում է անգիտակցականի ոլորտումե: Իսկ Թ. Շերրինգտոնն առաջիններից մեկն էր, որ առաջ քաշեց ներվային համակարգի ամբողջական կառուցվածքի և գործունեության մասին գաղափարը՝ որպես անհատի ձևավորման մեխանիզմ: «Կենտրոնական նյարդային համակարգը, թեկուզ և կարելի է տարանջատել առսովորողի ն մեխանիզմների, իրենից ներկայացնում է ներդաշնակ և միասնական ամբողջություն»: Նրա կարծիքով դրանց ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուսումնասիրել ռեցեպտրային (ընկալող) օրգանները, որոնցում սկսում է օրգանիզմի ռեակցիաները որոշակի դաշտերում[10]:

Ըստ Ա. Լեոնտևի «Սովորողի արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում հասարակական նյութական և հոգևոր փորձի փոխանակման գործընթացում, աշխատանքային կամ գործունեության այլ պայմաններում, այսինքն՝ դաստիարակության ընթացքում»[11]: Հոգևոր փորձի փոխանցումը լուրջ և պատասխանատու գործընթաց է, որի գործունեական բաղադրիչներն են հոգևոր գիտելիքների, հոգևոր զգացումների ու հոգևոր վարքի ձևավորումները:

Դաստիարակության գործընթացում հոգևոր և բարոյական զգացմունքերի ձևավորման ինտեգրացված մոտեցում է առաջարկել ռուս փիլիսոփա աստվածաբան, հոգեբան մանկավարժ, պրոֆեսոր Վ. Զենկովսկին, որը Ժ. Ռուսոյի առաջարկած այն տեսությունը, թե երեխայի բանական էությունը մաքուր է ու բարի, համարում է միակողմանի, այնպես, ինչպես Ի. Կանտինը՝ մարդու չար բանականության վերաբերյալ: Վ. Զենկովսկին առաջարկում է դիտարկել խնդիրը հոգևոր տեսանկյունից՝ միավորելով այդ երկուսը մեկ՝ քրիստոնեաբարոյական ուսմունքի մեջ: Ըստ այդմ, մարդը ներկայանում է, որպես «Աստծո նմանությամբ ստեղծված»՝ բարի բանական էակ, իսկ նրա բարոյական նորմերի խախտման երևույթը՝ չար (մեղավոր մարդ): Նա համարում է բարոյական դաստիարակությունը չարի ակտիվ հաղթահարում՝ դրական հոգևոր, կամային պոտենցիալի հայտնաբերման և հաստատման միջոցով: Այն իր մեջ ամփոփում է նաև դաստիարակության դրականի վրա հենվելու սկզբունքը, ինչպես նաև, արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը[12]:

---

[10] Капцов, А. В. Аксиологическая направленность личности : Руководство по применению теста / А. В. Капцов, Л. В. Карпушина. Самара : Содружество, 2006. с. – 26.

[11] А.В.Капцов, Психологические факторы личносней молодежи, Серия «Психология». 2008. №2(4). С.118- 124.

[12] Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.

2. Թումանյանական ստեղծագործությունների ազդեցությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոխվում են. որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին տասնամյակներ առաջ, այսօր այլևս էական արժեք չեն ներկայացնում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն:

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»[13]: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն:

Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոց են ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Որպես մանկավարժական արժեքներ՝ դրանք մեծ

[13] Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”,1980, էջ 132:

նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Օրինակ՝ ժողովրդական բա- նահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված են ժողովրդի կյանքը, նրա աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդական փիլիսոփայությունը և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով»[14]:

Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին միշտ հատուկ է եղել բացառիկ աշխատասիրությունը, որով էլ պետք է դաստիարակվի երեխան: Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ են գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները:

Հ. Թումանյանի բարոյական դաստիարակության ակունքն աշխատանքն է, որը նյութական և հոգեկան բոլոր հատկությունների աղբյուրն է: Ինչպես հայտնի է, երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային կերպով. այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով՝ կարելի է հասնել դրական արդյունքի: Սովորողների գիտակցության և վարքագծի մեջ նոր արժեքների ներդրման գործընթացը խիստ հակասական է և կախված է մի շարք գործոններից՝ սոցիալական այն միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն: Ընտրելով դաստիարակության առումով հիմնարար արժեքները, գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ընտանիքը, դպրոցը հնարավորություն են ստանում դաստիարակության բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել

[14] Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с..

քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք[15]:

Հովհաննես Թումանյանի ժառանգության և արդիական համազգային նշանակությունը բնորոշվում է բազմաթիվ կողմերով, որոնք անմիջապես առնչվում են հայ գրականության և ողջ մշակույթի զարգացման առանցքային ու արդի հարցերին:

Սկզբից ևեթ Թումանյանի ստեղծագործական զարգացումն ընթացավ ժողովրդի կյանքից և մտածողությունից բխած, իր գաղափարական–գեղարվեստական ողջ համակարգով նրա ամենից նվիրական ձգտումներն արտահայտող, նրա առաջադիմությանը ծառայող արվեստ ստեղծելու ուղղությամբ: Դեռևս 1890–ական թթ. նրա հռչակած թևավոր կոչը՝ «Դեպի ժողովո՛ւրդը, դեպի բնությո՛ւնը, հայո՛ց գրողներ», դարձավ նրա ամբողջ ճանապարհի ուղեցույցն ու նշանաբանը: Սրանից շեղվող կամ, առավել ևս, սրան հակասող որևէ տող անհնարին է գտնել Թումանյանի ժառանգության մեջ:

Թումանյանը ստեղծագործական զարգացման մեծ ուղի է անցել անցյալ դարի 80–ական թթ. մինչև մեր դարի 20–ական թթ. սկիզբը: Այդ շուրջ քառասնամյա ուղին բաժանվում է երկու հիմնական փուլի՝ մինչև XIX դարի վերջը (մոտ 15 տարի) և նոր դարի առաջին քսանամյակը: Առաջին կենսական տպավորությունների կուտակման, ստեղծագործական ուղիների որոնման շրջանն է, իսկ երկրորդը՝ գեղարվեստական հասունության, գաղափարների փիլիսոփայական խորության նվաճման շրջան: Ստեղծագործական այդ մեծ զարգացումը, բնականաբար, ուղղակիորեն դրսևորվեց նաև ժողովրդայնության ըմբռնման և նրա գեղարվեստական մարմնավորման մեջ[16]:

Թումանյանը հայ գրականության պատմության մեջ, ի թիվս բազմաթիվ նորությունների, բերեց նաև ժողովրդայնության նոր, շատ ավելի բարձր արժեքային համակարգ: Ազգային գրականության ամեն մի նոր փուլում ժողովրդայնության հարցը դրվում է յուրովի, հասարակական կյանքի նոր պահանջներին ու արժեքներին համապատասխան: Ինչպես գեղարվեստական զարգացման շատ ուրիշ հարցերում, այնպես էլ ժողովրդայնության խնդրում նոր, ավելի խորացված պահանջներ դրվեցին XIX դարի վերջին տասնամյակում հայ գրականության պատմության այդ կարևորագույն, բեկումնային նշանակություն ունեցող շրջանում:

---

[15] Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, էջ 47-52:

[16] Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Ե., 1964, էջ 305-435: Ա. Ինճիկյան, Հ. Թումանյանի «Քաջ Նազարը» //ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», N1, Ե., 1938 էջ 83-98:

Հովհաննես Թումանյանի ողջ ստեղծագործությունը ամենասերտ և բազմազան կապերով առնչվում է հայ և համաշխարհային ժողովրդական բանահյուսության արժեքային համակարգի հետ: Դարերի ընթացքում ժողովրդի ստեղծած վիպերգերն ու հեքիաթները, առակներն ու ավանդությունները Թումանյանի ստեղծագործության հիմքում մեծ դեր են խաղացել: Ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կապը համարելով գրականության ուժի և ժողովրդայնության կարևոր չափանիշներից մեկը՝ Թումանյանն ասում էր. «Մարդ որքան մոտ լինի իր երկրին ու ժողովրդին, որքան շատ խորանա ժողովրդական ստեղծագործության մեջ, նա էնքան ավելի մեծ է ու համամարդկային. էդ ճանապարհով միայն գրողը կարող է համամարդկային գրականության մեջ տեղ ունենալ»[17]:

Թումանյանը ժողովրդական բանահյուսության մեջ տեսնում էր «մեր գրականության հարազատ հողն ու պատվանդանը», «ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա»[18]: Հենց այս դիրքերից էլ բանաստեղծը մոտենում էր այս կամ այն արվեստագետի ստեղծագործությանը: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Մկրյանը, «Թումանյանը ժողովրդի և ժողովրդական ստեղծագործության կապի խորությամբ է որոշում գրողի մեծությունը ու համամարդկայնությունը»[19]:

Ժողովրդական բանահյուսության հետ Թումանյանի ստեղծագործության կապի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ[20], որոնք շոշափում են բանաստեղծի գեղարվեստական ժառանգությունը՝ ընդգրկելով ոչ միայն նրա ստեղծագործությունները, այլև հոդվածները, նամակները, զրույցներն ու թարգմանությունները և այլն[21], որոնք այսօրվա սովորողների արժեքային համակարգում դնում են իրենց հիմքը:

Առասպելական հերոսների ու դեպքերի մեջ Թումանյանը տեսել է ժողովրդի իրական հույզերը, տենչերն ու իղձերը, որոնք «ընդհանուր, ընդարձակ և մնայուն են, մի խոսքով՝ արժեքները այստեղ բոլորինն է[22]: Բանաստեղծը բանահյուսությունը դիտել է որպես ժողովրդական ոգու և աշխարհընկալման արժեքներ: Թումանյանի համար

---

[17] Թումանյան Հ., Երկերի ժողովածու, ժողովրդական հրատ., Ե., 1926, էջ 8:

[18] Թումանյան Հ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, 65-66: Թումանյանի երկերից մեջբերումները կատարվում են ըստ բանաստեղծի ժառանգության ակադեմիական հրատարակության, որը լույս է տեսել 1940-1959 թթ.:

[19] Մկրյան Մ., Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը «Սովետական գրականություն», Ե., 1943, N 3, էջ 72:

[20] Ղանալանյան Ա., Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը «Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ», հ. 1, Ե., 1964, էջ 23-45:

[21] Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Ե., 1966: Էդ. Ջրբաշյան, Հովհաննես Թումանյան/ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 5, Ե., 1979, էջ 327-334:

[22] Թումանյան Հ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, էջ 15:

բանահյուսության մեջ թանկ էր առաջին հերթին դարերով անցած աշխարհընկալումը, որ ժողովուրդը դարձրել է իմաստուն խոսք բարու ու չարի, երջանկության և արդարության, գեղեցկության ու կատարելության և այն ամենի մասին, ինչը եղել է ժողովրդի խոհերի ու մտահոգությունների առարկան:

Օգտագործելով բանահյուսության սյուժեներն ու մոտիվները՝ Թումանյանը դրանց միջոցով բացահայտել է և՛ իր հասարակական իդեալները, և՛ ամենախոր փիլիսոփայական ու գեղագիտական հարցեր, պատմել սիրո ու հավերժության, մահվան ու անմահության, մարդու ճշմարիտ կոչման, գեղեցիկի նկատմամբ նրա վերաբերմունքի, մարդու և բնության միաձուլման, կատարելությանը հասնելու նրա հավերժական ձգտման մասին: Բանաստեղծին լրջորեն մտահոգում էր, որ հայ ժողովրդական բանավոր ստեղծագործությունը բավարար չափով չի ուսումնասիրվում, որ ժողովրդական իմաստության բազմաթիվ գանձեր մեկընդմիշտ անհետանում են ասացողների հետ՝ այդպես էլ չդառնալով գրականության սեփականություն: Մինչդեռ Թումանյանը կարծում էր, որ «ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնության կնիք առնում[23]:

Սովորողների շրջանակում Հովհաննես Թումանյանի արժեքային կողմնորոշումների նշանակությունը բնորոշվում է բազմաթիվ կողմերով, որոնք անմիջապես առնչվում են հայ գրականության և ողջ մշակույթի զարգացման առանցքային հարցերին: Արվեստը կյանքին մերձեցնելու, մեր բանաստեղծության մեջ ռեալիզմի հաղթանակի, ժողովրդական բանահյուսության գանձերի բազմակողմանի օգտագործման, ազգային գրական լեզվի զարգացման և շատ ուրիշ հարցերում Թումանյանը հայ գրականության առջև բացեց նոր հորիզոններ: Նույնը կարելի է ասել նաև մեր գրականության մեջ ժողովրդայնության սկզբունքի հետագա խորացման մասին, որն իրագործվեց Թումանյանի ստեղծագործության շնորհիվ: Այս դեպքում ևս նա հանրագումարի բերեց իր նախորդների ստեղծագործական վաստակը և հայ մշակույթի պատմության մեջ գրեց նրա ամենակարևոր ու վառ էջերից մեկը[24]:

Թումանյանի գրական ժառանգության մեջ բանահյուսության ներթափանցումը գրական կամ գեղարվեստական մշակում որակելիս այդ հասկացության տակ չի

---

[23] Թումանյան Հ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, էջ 147:

[24] Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 96:

ընդգրկվում բանաստեղծի ստեղծագործական աշխատանքն իր ողջ խորությամբ ու բազմակողմանիությամբ: Ուշադիր քննելով Թումանյանի՝ բանահյուսությանն առնչվող երկերը՝ ակնառու են բանաստեղծի ստեղծագործական տարբեր նպատակադրումները, մշակման տարբեր սկզբունքներն ու ելակետերը: Մի դեպքում բանաստեղծը նպատակ է դրել ժողովրդական բանահյուսության այս կամ այն ժանրի երկերը (հեքիաթ, առակ, երգ) հղկել, պակաս կամ ավել չափով համառոտել, երբեմն միջամտել, որոշ հավելումներ մտցնել, լեզվական ու ոճական շտկումներ կատարել՝ այնուամենայնիվ մնալով տվյալ երկի կամ նրա մի քանի տարբերակների սյուժեի ու բովանդակության սահմաններում: Այս կարգի ստեղծագործություններ են Թումանյանի հեքիաթներից, առակներից ու զրույցներից՝ «Գառնիկ ախպերը», «Անխելք մարդը», «Սուտասանը», «Չախչախ թագավորը», «Ոսկու կարասը», «Խոսող ձուկը», «Մուկիկի մահը», «Մոծակն ու մրջյունը», «Էսպես չի մնա», թարգմանած ու փոխադրած հեքիաթներն ու այլ նյութերը, ժողովրդական երգերից ու մանկական խաղերից՝ «Կալի երգը», «Ճախարակը», «Կաքավի գովքը», «Աղվեսը», «Խնոցին», «Արտուտիկը», «Ճնճղուկները» և այլն: Այս և նման ստեղծագործությունները հարմար է կոչել գրական մշակումներ, որտեղ Թումանյանը ներդրել է գեղարվեստական իր հմտությունը, նուրբ ճաշակն ու զգացողությունը: Մյուս դեպքում այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են «Սասունցի Դավիթը», «Քաջ Նազարը», «Հազարան բլբուլը», «Թմկաբերդի առումը», «Չարի վերջը», «Լուսավորչի կանթեղը», «Փարվանան», «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն» և այլն: Թումանյանի համար բանահյուսությունը հենք է ծառայել կամ դրդապատճառ ու ազդակ եղել ծագումով ու էությամբ ժողովրդական նոր երկեր վերստեղծելու և հրաշակերտելու համար:

Թումանյանի ստեղծագործությունն իր ազգային նկարագրով ու և ժողովրդային էությամբ մեծապես պարտական է ժողովրդական բանարվեստի հետ նրա ունեցած սերտ կապին: Նա այն գրողներից է, որոնք, իրենց տաղանդի փայլով զարդարելով ժողովրդական բանահյուսությունը, հարազատ են մնացել վերջինիս էությանը՝ անխաթար պահելով նրա իմաստն ու ուժը: «Ժողովրդի ու ժողովրդական բանարվեստի այդօրինակ մերձեցումը,- ինչպես նշում է Ա. Ղանալանյանը,- պայմանավորված է եղել մի կողմից գրողի գաղափարական և գեղագիտական դավանանքներով, մյուս կողմից նրա անձնական կենսագրության հանգամանքներով: Ժողովրդի լեզուն, նրա կյանքն ու պայքարը, ազգային բնավորության հատկանիշները, բարոյական նկարագիրը հարազատորեն պահպանած

գեղարվեստական այն շտեմարանն էր դա, որտեղից գրողը կարող էր կենսական հյութեր քաղել իր ստեղծագործության համար»[25]:

Ամուր են եղել նաև ժողովրդական բանահյուսության հետ Թումանյանի ունեցած կենսագրական կապերը: Այդ առթիվ ուշագրավ է բանաստեղծի հետևյալ խոստովանությունը. «Ես լոռեցի եմ ու էն գլխից, ոչ «դիպվածով», սիրել և հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց»[26]:

Բանաստեղծի բանահյուսական մշակումների մեջ ծանրակշիռ տեղ են գրավում վիպական բանահյուսության այնպիսի սիրված տեսակները, ինչպիսիք են ավանդությունները, լեգենդները, առասպելական զրույցները և ժողովրդական վեպը՝ էպոսը: Հայտնի է, որ բանահյուսական հիշյալ տեսակները առավել սերտ ու անմիջականորեն են կապված ազգային ավանդույթներին և անդրադարձնում են ժողովրդի հնամենի հավատալիքները, սովորույթներն ու ծեսերը, որոնք իրենց ուրույն տեղն ունեն սովորողների արեժքային կողմնորոշումներում: Այդ պատճառով էլ բանահյուսական հիշյալ տեսակները ընդգծված ազգային երանգ ունեն ու պատմական բնավորություն:[27]: Նրա նամակներից ու գրություններից երևում է, թե ինչպիսի ջանասիրությամբ ու հետևողականությամբ է նա գրի առել ու հավաքել ազգային ավանդությունները, արժեքները, լեգենդները, առասպելներն ու զրույցները: Զեռքի տակ ունենալով երբեմն գեղարվեստական ամբողջականությունից զուրկ, կցկտուր ավանդական բեկորներ, փաստագրական կարգի տեղեկություններ և տեղագրական ու ծագումնաբանական ստուգաբանություններ՝ Թումանյանը չոր ու ցամաք այդ նյութերի հիման վրա գեղարվեստական լիարյուն ստեղծագործություններ է հրապարակ հանել, որոնք գաղափարական հարուստ բովանդակությամբ ու գեղարվեստական խոսքի պատկերավորությամբ ներգործում են սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա և հանդիդսանում են հայ դասական գրականության գոհարներից են:

---

[25] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 98:

[26] Ղանալանյան Ա.. Թումանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Ե., 1985, էջ 181:

[27] Նույն տեղում, էջ 96:

Եզրակացություն

Այսպիսով՝ վերլուծելով վերոնշյալ թեման, եկանք այն եզրահանգման, որ, «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»: Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Սովորողների հետ իրականացվող դաստիարակչական գործունեությունը նրանց համակողմանի զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում: Մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ դպրոցում այն կարող է լուրջ ներդրում կատարել հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն ու ֆիզիկական կատարելությունը իրենց մեջ ներդաշնակ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում, որովհետև երեխաների ճիշտ դաստիարակությունից, դրանում ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի գործոնների մանկավարժորեն անթերի գործադրումից է կախված քաղքացիական հասարակության ապագան:

Թումանյանական հեքիաթների, վիպակների և դրանց ուսուցման առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց ունեցած գրական, դաստիարակչական նշանակության ուսումնասիրությունը բերում է հետևյալ եզրահանգմանը, որ թումանյանական բանաստեղծությունները սովորողների արժեհամակարգի ձևավորմանը նրանց հարաբերությունների կենսափիլիսոփայության խորը ընդհանրացումների արդյունք են թաքնված հրաշապատում իրողությունների մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.
2. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Զոն, 2011.
3. Թորգոմյան Լ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Ուս. ձեռն., Եր., 2011թ.
4. Թումանյան Հ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5.
5. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, ժողովրդական հրատ., Ե., 1926.
6. Ինճիկյան Ա., Հ. Թումանյանի «Քաջ Նազարը» //ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», N1, Ե., 1938.
7. Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Ե., 1966: Էդ. Զրբաշյան, Հովհաննես Թումանյան/ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 5, Ե., 1979.
8. Ղանալանյան Ա., Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը «Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ», հ. 1, Ե., 1964.
9. Ղանալանյան Ա.. Թումանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Ե., 1985.
10. Մկրյան Մ., Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը «Սովետական գրականություն», Ե., 1943, N 3.
11. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.
12. Զրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Ե., 1964.
13. Վալերի Միրզոյան, «Հայ Արիներ» Թիվ 18, 2003թ.
14. Օլշաննիկովա Ա. Ե., Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ.
15. Асмолов А.Г. Психология личности М.: Изд.-во МГУ, 1990.
16. Васильюк Ф. Е. Психология переживания. Изд. –во Моск. Ун-та, 1984.
17. Капцов А.В., Психологические факторы личносней молодежи, Серия «Психология». 2008. №2(4).

18. Капцов, А. В. Аксиологическая направленность личности : Руководство по применению теста / А. В. Капцов, Л. В. Карпушина. Самара : Содружество, 2006. с. – 26.

19. Карпушина В., Капцов В., Структура личностных ценностей, статья, 14.15.2009:

20. Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”,1980.

21. Корчак Я., Избранные педагогические произведения, М., 1979.

22. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978.

23. Подласый И.П., Педагогика начальной школы, Владос, 2008.